«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
16 ապրիլի 2001 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ապրիլի 2001 թվականի N 312
քաղ. Երևան

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ գիտության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմին ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ բացառությամբ 14-րդ հոդվածի 1-ին կետի «գ» և «ե» ենթակետերի ու 15-րդ հոդվածի «ա» և «գ» ենթակետերի, որոնցով նախատեսված լիազորությունները վերապահել համապատասխան ճյուղային նախարարություններին ու գերատեսչություններին:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հետ կապված լիազորություններն իրականացնել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածներին համապատասխան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2001 թվականի ապրիլի 16-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**